ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 փետրվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

17
(2867)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՅԴ-ԱԿԱՆՆԵՐԸ՝ ԱԿՏԻՎ ԳՈՐԾՈՒՂՎՈՂՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Իշխանական պատգամավորների հետ առաջիկայում գործուղումների են պատրաստվում մեկնել նաեւ ընդդիմադիր պատգամավորները:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ կայքից տեղեկացավ, որ փետրվարի 21-24-ը ՔՊ-ական պատգամավորներ Արթուր Հովհաննիսյանի, Սարգիս Խանդանյանի, Մարիա Կարապետյանի, Լիլիթ Մինասյանի հետ Վիեննա կմեկնի նաեւ «Հայաստան» խմբակցությունից Լիլիթ Գալստյանը:

Փետրվարի 14-17-ը Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակության կազմում կլինի նաեւ Գեղամ Մանուկյանը:

Իսկ ինչպե՞ս է ընդդիմությունը որոշում՝ թե ով պետք է մեկնի գործուղման. «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ պատվիրակության կազմում ընդգրկվում են այն պատգամավորները, որոնք տվյալ երկրների բարեկամական խմբերում են ընդգրկված.

«Հիմնականում ԱԺ-ից խմբակցության ղեկավարությանն են հարցնում՝ ովքեր ընդգրկվեն, իսկ շատ դեպքերում ԱԺ նախագահն ինքնուրույն է որոշում: Օրինակ՝ եղել են դեպքեր, որ ես պետք է պատվիրակության կազմում մեկնեի ՌԴ, բայց ինձ չեն ընդգրկել, այսինքն՝ ԱԺ նախագահը, դատարանի փոխարեն, որոշում է կայացրել, ու ես նրան էլ այս մասին ասել եմ»,-ասաց նա:

Նկատեցինք նաեւ, որ ընդդիմության կազմից գործուղումների մեկնում են հիմնականում «Դաշնակցության» ներկայացուցիչները. հատուկ որոշում կա արդյոք նրանց մասով խմբակցությունում, որ միայն «Դաշնակցության» ներկայացուցիչները պետք է լինեն պատվիրակությունների կազմում. մեր այս հարցին ի պատասխան՝ Սեյրան Օհանյանն ասաց.

«Խմբակցության ներսում մենք որոշումները չենք կայացնում՝ հաշվի առնելով «Դաշնակցության» անդամ լինել-չլինելը:

Մենք որոշում կայացնում ենք՝ հաշվի առնելով նրանց մասնակցությունը այս կամ այն միջազգային պատվիրակություններում ու բարեկամական խմբերում: Մենք հարգում ենք «Դաշնակցություն» կուսակցությունը, բայց նրանց մասով միակողմանի որեւէ որոշում չկա»:



Երեկ ՔՊ խմբակցության պատգամավորներն ԱԺ-ում փակ հանդիպում են ունեցել Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանի հետ. նախագահությունում նստած է եղել նաեւ Վահե Ղալումյանը՝ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանական պատգամավորները փոխքաղաքապետի հետ քննարկել են տրանսպորտի թանկացման նախագիծը: Հիշեցնենք, որ հանրության շրջանում բարձրացած մեծ աղմուկից հետո իշխանությունները որոշել են որոշակի զիջումների գնալ, որպեսզի փոքր-ինչ պարպեն դժգոհությունների մեծ ալիքը: Իշխանականները վտանգ են զգում, որ ավտոկայանատեղիների թանկացումից հետո տրանսպորտի գնի կտրուկ թանկացումը լուրջ կրքեր է բորբոքելու հանրության շրջանում, ու այլեւս իրենք էլ չեն կարողանա վերահսկել իրավիճակը, ուստի որոշել են զիջումների գնալ, օրինակ՝նվազեցնել ուղեվարձի թանկացման չափը: Երեկ փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, որը տրանսպորտի թանկացման նախագծի «համակարգողներից է», ՔՊ-ականներին ներկայացրել է, թե ինչ փոփոխություններ են ուզում անել նախագծում, որպեսզի այն սեղմ ժամկետում ամբողջական տեսքի բերեն ու կրկին ներկայացնեն ավագանու նիստին: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, իշխանական պատգամավորներն էլ կիսել են տեսակետը, որ իրավիճակը ավելի չբորբոքելու համար պետք է որոշակի զիջումների գնալ, ձեռնպահ մնալ առայժմ թանկացումներից կամ դա անել անցումներով՝ ոչ միանգամից:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի բողոքը վարույթ ընդունել: Նշենք, որ գլխավոր դատախազը բողոք էր ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ պահանջելով կալանավորել գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովին: Այդ մերժումը նշանակում է, որ գեներալը կմնա ազատության մեջ: Հիշեցնենք, որ Վարդապետյանը պահանջում էր վերացնել ՀՀ հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի որոշումը եւ կալանավորել գեներալին: Գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովը դեկտեմբերի 2-ին ազատ էր արձակվել 9-ամսյա կալանքից՝ 20 միլիոն դրամ գրավի դիմաց: Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը նաեւ վարչական հսկողություն է նշանակել, ըստ որի՝ նախկին բարձրաստիճան զինվորականը երեկոյան 10-ից մինչեւ առավոտյան 7-ը պետք է տանը լինի: Խաչատուրովի փաստաբան Հակոբ Եսոքյանն «Ազատությանն» ասաց՝ դատավորն այս որոշումը կայացրել է՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: «Այն, որ մարտ ամսից է կալանավորված, այն, որ 9 ամիս կալանքի տակ գտնվելու ընթացքում քննությունը ոչ մի քայլ առաջ չի գնացել, այն, որ մայիսին սկսած դատաքննությունը դեռ նախնական դատալսումներ են, այն, որ 90 հոգի վկա դեռ կա լսելու, այն, որ 60 հատոր գործ կա, այն, որ նիստերը 2 շաբաթը մեկ են, այն, որ վաղեմության ժամկետին մնացել է երկու ամիս»,- ասել է նա: 46-ամյա Խաչատուրովը մեղադրվում է փողերի լվացման համար. այս գործով մեղադրյալի աթոռին են եւս 12 հոգի, նրանց թվում՝ պաշտպանության նախկին նախարար, այժմ խորհրդարանի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը: Խաչատուրովը երրորդ բանակային կորպուսի հրամանատարն էր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ դատական համակարգը ՍԴ դատավորի թեկնածու Դավիթ Բալայանի փաթեթը ուղարկել է Ազգային ժողով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Դավիթ Բալայանի հարցը այս պահին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում է, եւ ստուգվում է նրա բարեվարքությունը: Առաջիկայում հանձնաժողովը ՍԴ դատավորի թեկնածուի բարեվարքության եզրակացությունը կուղարկի Ազգային ժողով, որտեղ էլ վերջնականապես կորոշեն քվեարկության օրը: Ինչ է սպասվում ԱԺ-ում՝ կհետեւենք զարգացումներին: Հիշեցնենք, որ ՍԴ դատավոր դառնալու համար դիմել էր Երեւան քաղաքի դատավոր Դավիթ Բալայանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, որը մի քանի ամիս առաջ էր ԲԴԽ-ից գնացել ու ԱԺ-ում ընտրվել էր Վճռաբեկ դատարանի դատավոր: Դատավորները 158 ձայն տվեցին Դավիթ Բալայանին: Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները: Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից:

ԶՐՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆՑԻՆ ԱՆՏԱՐԲԵՐ ՉԻ ՄՆԱԼՈՒ

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշել է՝ իշխանությունները չեն հրաժարվել տրանսպորտի թանկացման գաղափարից, այլ հետաձգել են այն, որպեսզի հանրության տրամադրությունները սուզեն: Մեզ հետ զրույցում Սուքիասյանը նաեւ չբացառեց, որ փողոցային պայքար սկսեն՝ տրանսպորտի թանկացման դեմ:

-Պարոն Սուքիասյան, ավագանու այսօրվա նիստին պետք է ընդգրկված լիներ տրանսպորտի թանկացման մասին աղմկահարույց նախագիծը: Վերջին պահին իշխանությունները կարծես հետքայլ արեցին, փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը հայտարարեց, որ պետք է այն քննարկվի եւ կրկին ներկայացվի ավագանու նիստին: Ի՞նչ տեղեկություններ Դուք ունեք, ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում տվյալ նախագծում, ու սա կարո՞ղ ենք համարել հետքայլ, թե՞ պարզապես աղմուկից ելնելով՝ որոշել են որոշ ժամանակ դադարեցնել:

-Այն հանրային դժգոհությունը, որ եղավ սոցիալական ցանցերում, կարծում եմ, եղավ այն հիմնական դրդիչը, որ իշխանություններին հարկադրեց գնալ նման քայլի: Նախօրեին՝ այլ թեմայով քննարկումների ժամանակ, քաղաքային իշխանության ներկայացուցիչները հայտարարել են, որ նախատեսում են ինչ-ինչ արտոնություններ սահմանել, բայց հնչեցրած 20 տոկոս արտոնությունները այդ հրեշավոր թվի պայմաններում էական ոչինչ չեն փոխում: Իրենք փորձում են, հարային տրամադրությունները շոշափելով, միանգամից պայթյուն չառաջացնել, որովհետեւ ոչ պոպուլյար որոշումները մեկը մյուսի հետեւից կլինեն լրջագույն հանրային դժգոհության գեներատոր, բայց, արի ու տես, իրենք պաշտոնապես չեն հրաժարվել այդ գաղափարից: Կսպասենք, կտեսնենք՝ ինչ վերջնական տեսքի կբերեն նախագիծը, եւ այդ ժամանակ իրականությունը պարզ կդառնա: Մենք բոլոր պարագաներում կտրուկ, թռիչքաձեւ թանկացման դեմ պայքարելու ենք:

-Այսինքն՝ փողոցային պայքարի՞, հնարավոր է, դուրս գաք, եթե նախագիծը կրկին բերվի նիստերի օրակարգ:

-Շատ հնարավոր եմ համարում: Ի տարբերություն այլ քաղաքական, ավագանու ուժերի՝ կարմիր կետագծերի ժամանակ էլ՝ դեկտեմբերին, չորս-հինգ օր մենք փողոցներում սառնամանիքին հանրային իրազեկում ենք արել:

-Բայց իշխանություններին, ամեն դեպքում, հաջողվեց անցկացնել նախագիծը:

-Շատ լավ, հաջողվեց, բայց այսպես եկեք նայենք. վարորդները ավելի սոցիալապես փոքր շերտ են, քան գերակշիռ մասը մեր բնակչության, որ օգտվում է քաղաքային տրանսպորտից, եւ հանրային տրանսպորտի թանկացումը, վստահ եմ, հանրային շատ ավելի լայն շերտեր է ընդգրկելու, եւ երեւանցին անտարբեր չի մնալու այդ թանկացմանը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԵՆՔ ՎԵՐԼՈՒԾԵԼ

ԴԱ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՂԵՐՁՆ Է

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիտարկմամբ՝ իշխանությունը բավարար ուշադրությամբ չի լսել ժողովրդի ուղերձը, որով նա խաղաղություն էր պատվիրում քաղաքական գործիչներին:

Այս մասին Փաշինյանն ասել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի՝ փետրվարի 10-ին Աշտարակում տեղի ունեցած նիստում՝ անդրադառնալով ՀՀ հարատեւման եւ անվտանգային ապահովման համար անհրաժեշտ անելիքներին:

«Մենք մեղավոր ենք միայն մի բանում, որն առաջին անգամ հրապարակային պիտի ասեմ. եթե մենք հանցանք ենք գործել, մեր հանցանքը եղել է հետեւյալը, որ մենք ժողովրդի ձայնը բավարար ուշադրությամբ չենք լսել, որովհետեւ վերջին 20 տարում ընդդիմության կարգավիճակում, թե իշխանության, թե նույնիսկ քաղաքական գործունեությամբ չզբաղվողի կարգավիճակում, ում տեսել ենք, որ տունը, օջախը մտել ենք, մի կտոր հաց կիսել ենք, թե չենք կիսել, ապա այդ սեղանի շուրջ պարտադիր հնչել է խաղաղության կենացը»,- ասել է վարչապետը՝ նշելով, որ, ըստ այդմ, պետք է հստակ լիներ, որ դա ժողովրդի ուղերձն է, որը իշխանության, կառավարության գործատուն է եւ պատվիրում է, թե ինչ պետք է անի կառավարությունը:

«Եվ եթե մենք մեր ժողովրդի հետ բավարար չափով կապված լինեինք, հասկանայինք նրան, մենք կհասկանայինք, որ նա այդ պատվերն է տալիս քաղաքականությամբ զբաղվող մարդկանց: Մեր հանցանքն այն է, որ մենք այդ ուղերձը չենք ընկալել բավարար խորությամբ, եւ, երկրորդը՝ այդ ուղերձը չենք վերլուծել եւ հետ չենք եկել ժողովրդին՝ ասելու, որ մենք հասկացանք, որ դուք խաղաղություն եք պատվիրում մեզ»,- համոզմունք է հայտնել նա՝ շեշտելով, որ իշխող, կառավարող քաղաքական ուժի պարտականությունն է գնահատել իրադրությունը, կիսել հանրության հետ այդ իրադրությունը եւ այն հաղթահարելու կամ դուրս գալու ուղիներն ու այդ ճանապարհի ռիսկերը, դրանց կառավարման հնարավոր մեխանիզմները, գործիքները ցույց տալ՝ ձեւավորելով հանրային համաձայնություն:

Վարչապետի գնահատմամբ՝ ինչպես նախկինում, այնպես էլ այժմ ՀՀ-ի շուրջ իրողությունը նման է ականապատ դաշտի, որից դուրս գալու ելքերն այնքան էլ շատ չեն, եւ կարող է պարզվել նույնիսկ, որ միայն մեկ ճանապարհ կա:

Փաշինյանը հայտարարել է, որ մինչ այժմ կառավարությունը դրա մասին չի խոսել նաեւ այն պատճառով, որ, նախ, վստահելի չի համարել խաղաղության հասնելու այդ ճանապարհը եւ սոցիալ-հոգեբանական առումով չի համակերպվել այդ իրողության հետ:

Վարչապետը նկատում է, որ շատ են պատահում դեպքեր, երբ ամենատարբեր տարածքների վերաբերյալ տարբեր պատմություններ, նախապատմություններ կան, բայց կյանքը, հանգամանքները, ի վերջո, բերում են մի կետի, երբ պետք է, ինչ-որ բազայի վրա հիմնվելով, ընտրություն կատարել, որոշում կայացնել եւ կառուցել երեխաների ապագան:

«Հիմա առավել եւս շատ լավ գիտեմ մեր ժողովրդի ցանկությունները, երազանքները եւ մղումները, եւ ես ինձ պարտավորված եմ զգում այս բարդ իրավիճակում ժողովրդին առաջնորդել՝ այդ ականապատ դաշտից անվնաս կամ նվազագույն կորուստներով դուրս գալու: Ինչպես նախկինում եմ ասել՝ պարտավորված եմ այս փոթորկահույզ օվկիանոս ընկած մեր նավը, մեր նավակը հասցնել խաղաղ հանգրվանի»,- հավաստիացրել է վարչապետը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը օրերս ընդունել է Սանկտ Պետերբուրգի նահանգապետի խորհրդական Վահրամ Բարսեղյանին: Քննարկվել են Երեւան-Սանկտ Պետերբուրգ համագործակցությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, դեսպան Կոպիրկինը բարձր է գնահատել Երեւանում Սանկտ Պետերբուրգի բիզնես կենտրոն կառուցելու ծրագիրը, ինչպես նաեւ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի ու Երեւանի միջեւ մշակութային ու տնտեսական ծրագրերի իրականացումը:

ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ԱԺ նախկին պատգամավոր, ԲՀԿական գործիչ Արման Աբովյանը, անդրադառնալով Վարդենիսում տեղի ունեցող բողոքի ակցիաներին, գրում է. «Այն, ինչ տեղի է ունենում Վարդենիսում այս օրերին, ցույց է տալիս մարդկանց մոտ իրականության ընկալման արմատական փոփոխությունները:

Մարդիկ այլեւս կտրականապես չեն վստահում թավշյա իշխանություններին:

Հիշեցնեմ, որ մարդիկ փակել էին դեպի քաղաք տանող ճանապարհը Վարդենիսից այլ քաղաքներ անձնագրային եւ ենթադրաբար քաղաքի սոցիալական այլ ծառայություններ տեղափոխելու՝ թավշյա իշխանությունների ծրագրերի պատճառով:

Տեղում մարզպետն էր, որն իսպառ հերքում է բոլոր այն լուրերը, թե այդպիսով իշխանությունը պատրաստվում է «հանուն խաղաղության» հանձնել Հայաստանի ինքնիշխան տարածքի հերթական մասը թուրք-ադրբեջանական օկուպանտներին:

Բայց այս դեպքում իմաստը նույնիսկ այն չէ՝ մարզպետը ճշմարտությունն է ասում, թե ոչ:

Խնդիրն իրականում ավելի խորն է եւ հայեցակարգային:

...Փաստորեն, մենք տեսնում ենք ժողովրդի կողմից իշխանությունների ցանկացած գործողության նկատմամբ զանգվածային անվստահության դրսեւորում:

«ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ»

«Կոռուպցիան Երեւանում համատարած է եւ հսկայական չափերի է հասնում»,- Ազգային ժողովում փետրվարի 12-ին՝ «Երեւանը եւ կոռուպցիան» թեմայով քննարկման ժամանակ, հայտարարեց ակտիվիստ Արթուր Չախոյանը:

Ակտիվիստի խոսքով՝ կոռուպցիայի դեմ պայքարում իր առաջին հաղթանակն արդեն գրանցվել է: Երեւանի քաղաքապետարանն ընդունեց, որ նա իրավացի էր: «Ուրեմն անհամապատասխանություններ կան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նստարանների տեղադրման հետ կապված... Միայն նշեմ, որ վարչական շրջանի ղեկավարը պատրաստվում էր ինձ պատասխանատվության ենթարկել»,- ասաց Չախոյանը:

Ակտիվիստը, մասնավորապես, ներկայացրել է Երեւանում կոռուպցիայի հետ կապված փաստեր, որոնք, ըստ նրա, կատարվել են կամ թերի, կամ խախտումներով, որոնց, ըստ էության, քաղաքապետարանը հավանություն է տվել եւ վճարել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԼՈՒԾԱՐՎԱԾ ՉԷ

Մինչ հանրությունն անօգուտ սպասում է ՔՊ-ի աուդիտի խայտառակ արձանագրումների քրեաիրավական ընթացքին, ի հայտ է գալիս այլ նմանատիպ հարց: ArmLur.am-ը տեղեկացավ, որ գոյություն ունի «Քաղաքացիական պայմանագիր» հիմնադրամ ՀՄԴ-ն, որը, համաձայն պետական ռեգիստրի տվյալների, գործող է, լուծարված չէ եւ չի գտնվում լուծարման գործընթացում: Հիմնադրամը գտնվում է Նիկոլ Փաշինյանին պատկանող տան հասցեում՝ Նժդեհի 29 շենք 15 բնակարանում, այստեղ գրանցված այս հիմնադրամն իր գոյության 11 տարիների ընթացքում ներկայացրել է ընդամենը մեկ հաշվետվություն 2015 թվականի, առանց ադմինիստրատիվ ռեսուրսի, գրեթե չունի նվիրատվություններ եւ ընդամենը ծախսել է 6.8 միլիոն դրամ՝ ներկա 100-ավոր միլիոնների փոխարեն: Բանն այն է, որ այս հիմնադրամը, որը պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձ է համարվում, համաձայն ՀՀ օրենքի, պարտավոր է վճարել հարկեր, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Փաստն այն է, որ հիմնադրամը չի կատարում օրենքով սահմանված պայմանները:

Հետաքրքիրն այն է, որ 2013 թվականին, երբ հիմնադրամը ստեղծվում էր, տնօրենն էր ներկայիս շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը: 2018 թվականին Սիմիդյանին փոխարինել է այժմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանը, որն այժմ հանդիսանում է հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը փետրվարի 12-13-ն աշխատանքային այցով կգտնվի Բրյուսելում՝ մասնակցելու ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 5-րդ նիստին:

Արարատ Միրզոյանը հանդիպումներ կունենա նաեւ այլ գործընկերների հետ:

ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 5-րդ նիստը կկայանա փետրվարի 13-ին՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի մասնակցությամբ:

Հանդիպման օրակարգը ներառում է հարցերի լայն շրջանակ: Կքննարկվեն ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ընթացքը, այդ թվում՝ ՀՀ-ում իրականացված բարեփոխումների եւ դրանց արդյունքների մասով: Կդիտարկվեն նաեւ տարբեր ոլորտներում ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման հեռանկարները՝ հաշվի առնելով ներկայիս առաջնահերթություններն ու առկա մարտահրավերները: Քննարկվելու են նաեւ անվտանգության իրավիճակը Հարավային Կովկասում եւ տարածաշրջանային հարցեր:

Հանդիպման արդյունքներով Արարատ Միրզոյանը եւ Ժոզեպ Բորելը հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով, որը ԵՄ խորհրդի կողմից ուղիղ կհեռարձակվի Երեւանի ժամանակով 17:00-ին:

ԻՆՉՈՒ Է ՁԳՁԳՎՈՒՄ

ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԸ՝ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

«Ըստ էության, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ճարտարապետությունը եւ սկզբունքները համաձայնեցված են, եւ նախորդ տարեվերջին թվում էր, թե, ի վերջո, պայմանագրի վերջնական տեքստի համաձայնեցումը ըստ մոտ է, բայց սկզբից Ադրբեջանը երեք անգամ հրաժարվեց մասնակցել տարբեր ֆորմատներով բանակցություններին, որից հետո Ադրբեջանում նախագահական ընտրություններ նշանակվեցին»,- բրիտանական «The Telegraph»-ին տված հարցազրույցում ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով հարցին, թե ինչ կետում է եւ ինչու է ձգձգվում Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացը:

«Նախ պետք է արձանագրել, որ միջազգային երեք ֆորմատներում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության սկզբունքները համաձայնեցված են: Առաջինը տեղի է ունեցել 2022թ. հոկտեմբերի 6-ին՝ Պրահայում տեղի ունեցած քառակողմ հանդիպման ընթացքում, որին մասնակցել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ ես, եւ մենք երկար քննարկումներից հետո ընդունել ենք համատեղ հայտարարություն, որտեղ արձանագրվում է հետեւյալ սկզբունքը, որ Հայաստանը եւ Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա»,- ասել է Փաշինյանը՝ պարզաբանելով, որ Ալմա-Աթայի հռչակագրով, որ ստորագրել են Խորհրդային Միության մաս կազմած 12 հանրապետություններ, արձանագրվել է՝ առաջինը՝ Խորհրդային Միությունը դադարում է գոյություն ունենալ, եւ այդ հանրապետությունները, դառնալով ինքնիշխան պետություններ, ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, սահմանների անխախտելիությունը եւ սուվերենությունը: Այդպիսով, Ալմա-Աթայի հռչակագրով՝ Խորհրդային Միության հանրապետությունների միջեւ գոյություն ունեցած վարչական սահմանները դառնում են այլեւս պետական սահման:

«Ինչո՞ւ եմ այդպես ասում, որովհետեւ Ալմա-Աթայի հռչակագրում արձանագրվում է, որ այդ հանրապետություններն ընդունում են գոյություն ունեցող սահմանները, այսինքն՝ այդ պահին ինչ սահման գոյություն ուներ, նրանք այդ սահմանների անձեռնմխելիությունը ճանաչում են: Եվ, իհարկե, այստեղ մի շատ կարեւոր նրբություն կա, որ ես ուզում եմ ընդգծել. Ալմա-Աթայի հռչակագիրը եւ հռչակագրի հետ կապված փաթեթները Հայաստանի խորհրդարանը վավերացրել է 1992 թվականին, Ադրբեջանի խորհրդարանը վավերացրել է ավելի ուշ: Ստորագրումից եւ վավերացումից հետո տեղի են ունեցել շատ իրադարձություններ, բայց այս համատեքստում շատ կարեւոր է արձանագրել, որ Պրահայում հոկտեմբերի 6-ին Ֆրանսիայի նախագահի եւ Եվրամիության խորհրդի նախագահի ներկայությամբ Հայաստանը եւ Ադրբեջանը, ըստ էության, այդ բոլոր իրադարձություններից հետո վերահաստատել են, որ միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչում են Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա»,- ներկայացրել է ՀՀ վարչապետը:

Նրա խոսքով՝ երկրորդ կարեւոր կետն այն է, որ Ալմա-Աթայի հռչակագիրը պետք է դառնա երկու երկրների միջեւ սահմանների սահմանազատման եւ սահմանագծման հիմք: Սա էլ շատ կարեւոր սկզբունք է, ինչն այս համատեքստում նշանակում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացում ոչ թե սահման պետք է ստեղծվի, այլ Ալմա-Աթայի հռչակագրով հաստատված, վերահաստատված սահմանները պետք է արտահայտվեն գետնի վրա, քարտեզների վրա:

Փաշինյանի գնահատմամբ՝ Պրահայում ձեռք է բերվել առաջին ֆունդամենտալ պայմանավորվածությունը, որին հաջորդել է հոկտեմբերի 30-ին Ռուսաստանի նախագահի, Ադրբեջանի նախագահի եւ իր եռակողմ հայտարարության ստորագրումը, որտեղ Հայաստանը եւ Ադրբեջանը գրավոր հայտարարությամբ ընդունել են, որ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, սուվերենությունը, եւ հայտարարում են, որ հրաժարվում են ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառումից, եւ բոլոր հարցերը կլուծեն բանակցային ճանապարհով:

«Այս պայմանավորվածությունն է նաեւ հիմք դարձել՝ երրորդ ֆունդամենտալ սկզբունքի ձեւավորման եւ ձեւակերպման, որը նշանակում է, որ տարածաշրջանի կոմունիկացիաների բացումը, ապաշրջափակումը եւ միմյանց համար ճանապարհների բացումը տեղի կունենա երկրների ինքնիշխանության եւ իրավազորության հարգման շրջանակներում, եւ այդ սկզբունքն էլ նախորդ երկու սկզբունքների հետ արձանագրվել է մայիսի 14-ին եւ հուլիսի 15-ին Բրյուսելում տեղի ունեցած եռակողմ հանդիպումների արդյունքում: Ընդ որում՝ բոլոր, ինչի մասին ասում եմ, խոսքը հրապարակային փաստաթղթերին է վերաբերում»,- ընդգծել է վարչապետը՝ կարծիք հայտնելով, որ Ադրբեջանի նախագահական ընտրություններից հետո այս կետերի շուրջ կհաջողվի հասնել իմպլիմենտացիայի քաղաքական կամքի առկայության դեպքում:

«Կարող եմ արձանագրել, որ Հայաստանի կառավարությունը, ինչպես նախկինում, ունի այդ քաղաքական կամքը՝ գնալու մեր տարածաշրջանում կոնկրետ խաղաղության եւ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման՝ վերը նշված պայմանավորվածությունների հիման վրա»,- շեշտել է Փաշինյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

«Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական, զարգացող պետություն է եւ իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ իր դիմակայունությունը բարձրացնելու համար». այս մասին բրիտանական «The Telegraph»-ին տված հարցազրույցում ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պատերազմի մտավախության մասին հարցին:

«Վերջին տարիներին, կարծում եմ, միջազգային հանրությունը տեսավ, եւ մեր հանրությունն էլ տեսավ, որ մեր երկրի դիմակայունությունն էականորեն բարձրացել է: Մենք շարունակում ենք բարեփոխումների ճանապարհը Հայաստանի դիմակայունությունը մեծացնելու եւ բարձրացնելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է տարածքաշրջանային ապակայունացմանը եւ դրան ուղղված քայլերին, իհարկե, ցանկացած բանական մարդու մոտ դա առաջացնում է մտավախություններ»,-նշել է Փաշինյանը:

Նա կարեւորել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջպետական հարաբերությունների բնույթի արձանագրումը:

«Թեպետ մենք դիվանագիտական հարաբերություններ չունենք, ես պարտավոր եմ հղվել մեր կողմից ստորագրված փաստաթղթերի վրա: Մենք Ադրբեջանի հետ ունենք ստորագրած փաստաթուղթ՝ ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման վերաբերյալ: Եթե այս տրամաբանությամբ նայենք, եւ եթե Ադրբեջանը չի հարգում կամ չպիտի հարգի իր իսկ կողմից ստորագրած փաստաթղթերը, ուրեմն Ադրբեջանը կարող է հարձակվել ցանկացած երկրի վրա, ինչո՞ւ միայն Հայաստանի վրա: Նայեք Ադրբեջանի շուրջը. եթե ինքն իր միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները չի հարգում, ուրեմն կարող է ցանկացած իր հարեւան երկրի վրա հարձակվել, եթե այդպես է»,-շեշտել է վարչապետը՝ հավելելով, որ յուրաքանչյուր իրեն հարգող պետություն պետք է հետեւի իր ստանձնած պարտավորություններին:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՃ

ՄԻՋԱՄՏԵԼ Է ԷՄՄԱ ՊԱԼՅԱՆԸ

Գյումրու բազմաբնակարան շենքերից մեկում, որտեղ ապրում է ՔՊ-ական պատգամավոր Էմմա Պալյանը, միջադեպ էր եղել: Եվ, ահա, Քննչական կոմիտեն որոշում է կայացրել վերոնշյալ դեպքով:

Մասնավորապես, Արկադի Ավոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու նախնական դիտավորությամբ նախապես ձեռք բերված կանաչ գույնի պլաստմասե 22ի մեջ լցված բենզինով մոտեցել է Գյումրի քաղաքի Պ. Սեւակ փողոցի 13-րդ շենքի բակ, որտեղ կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենան այրելու նպատակով կոտրել է վարորդի դռան ապակին, բենզինը լցնելով ավտոմեքենայի սրահի մեջ՝ այրել է այն, այնուհետեւ իր հանցավոր նպատակը ավարտին հասցնելու դիտավորությամբ ձեռքին առկա դանակով կտրել է ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ավտոմեքենայի ջրատար խողովակը, ինչից հետո մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկայի՝ դանակի գործադրման սպառնալիքով, հասարակության եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու դիտավորությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել Վ. Գյոզալյանի, Ս. Սարգսյանի, ինչպես նաեւ ավտոմեքենայի կրակը հանգեցնելու վերաբերյալ կոչեր անող եւ օգնության հասած քաղաքացիների հասցեին:

Հիշեցնենք, որ Armlur.am-ը գրել էր, որ հոկտեմբերի 24-ին՝ ժամը 16:12-ին, Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Պարույր Սեւակի փողոցի թիվ 13 շենքի մոտակայքում այրվում է ավտոմեքենա:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ այդ դեպքը տեղի է ունեցել բազմաբնակարան շենքում, որտեղ ապրում է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Էմմա Պալյանը:

Ինչպես մեր աղբյուրներն էին պատմում, հարցը առաջացել է կենցաղային խնդրից, երկու հարեւաններ կենցաղային հարցով վիճել են, այնուհետեւ դեպքին միջամտել է նաեւ Էմմա Պալյանը:

ՔՊ-ական պատգամավորը փորձել է հանդարտեցնել իրավիճակը, բայց իրականում ավելի է թեժացել իրավիճակը:

Ինչպես ականատեսներն էին պատմել, նա սկսել է բղավել, իշխանական հայտարարություններ անել, ասել է, թե սա նախկինների Հայաստանը չէ, որ նման կռվներ անեն: Էմմա Պալյանի այս հայտարարություններն ավելի էին բարկացրել հարեւաններին, ու իրավիճակը ավելի է թեժացել: Վիճաբանությունն էլ հանգեցրել է նրան, որ հարեւաններից մեկը շենքի բակում մեքենա է այրել:

ArmLur.am-ը զրուցել էր նաեւ Էմմա Պալյանի հետ. վերջինս հաստատել էր, որ մեքենան իրենց բակում է այրվել, սակայն նշել, որ իրենց մեքենան չի, եւ ինքը որեւէ կռվի չի միջամտել. «Դեպքը մեր բակում է տեղի ունեցել, ես բազմաբնակարան շենքում եմ ապրում, բայց մեքենան մեր ընտանիքինը չէ, մեր հարեւանի հետ է դեպքը տեղի ունեցել: Ինչ վերաբերում է կռվին, ես այդ օրերին Երեւանում եմ եղել, կռվի մասին տեղեկություն չունեմ, որեւէ միջադեպի չեմ խառնվել, տեղյակ չեմ՝ ինչի մասին է խոսքը, ձեզանից եմ լսում»,- ասել էր նա:

Հիշեցնենք, որ Էմմա Պալյանն աչքի էր ընկել իր մեկ այլ սկանդալային հայտարարությամբ, երբ ասել էր, որ իր ամուսնուն գրանցել է որպես իր՝ հասարակական հիմունքներով օգնական, որպեսզի դրսում իրեն չսպասի եւ չմրսի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԹԱՐ

Ո՞Ր ՄԻ «ԾԱԼԱՊԱԿԱՍԸ» ՈՐՈՇԵՑ

Փետրվարի 11-ին ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:40-ի սահմաններում Եղբայրության եւ Մանթաշյան փողոցների խաչմերուկում բախվել են Hyundai եւ Honda մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 2 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Վիրավորներին առաջինը օգնության են հասել քաղաքացիներն ու օպերատիվորեն ժամանած Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, որոնք վիրավորներին մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել:

Դեպքի վայր է ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երեւանի թիվ 2-րդ հրշեջ փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել գազաբալոնն ու սահմանազատել տարածքը: Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի քնդի 4-րդ գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Կարեն Ավետիսյանի գլխավորությամբ:

Վթարի մասին ՊԾ Երեւան քաղաքի գնդից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Գոռ Թադեւոսյանի, ավագ քննիչ Գեղամ Ծառուկյանի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են վարորդների եւ վիրավորների ինքնությունը:

Վթարի վայրի հարեւանությամբ բնակվող քաղաքացիները իրենց զայրույթն էին հայտնում՝ ասելով. «Այս խաչմերուկում դեռ սովետական տարիներին լուսակիր (սվետաֆոր) էր գործում, եւ, կարելի է ասել, թե՛ վարորդները, թե՛ հետիոտները, թե՛ բնակիչներս անվտանգ էինք մեզ զգում: Սովետի փլուզումից հետո ո՞ր մի «ծալապակասը» որոշեց, որ էս խաչմերուկից պետք է «սվետաֆորները» հանեն, ու դրանից հետո գրեթե վթարները նշված վայրում հաճախակիացել են: Մի քանի անգամ դիմել ենք պատկան մարմիններին՝ պնդելով, որ լուսակիրները նորից տեղադրեն. ամեն անգամ խոստանում են, բայց լրիվ «օդ» են դուրս գալիս: Անգամ լուսակիրների բացակայության պատճառով մահվան ելքով վրաերթեր, ավտովթարներ են տեղի ունեցել: Մի՞թե այդ «չինովնիկներին» դուր է գալիս նման դեպքերի կրկնությունը: Լուսակիրները դրե՛ք, հակառակ դեպքում վթարները չեն պակասի, ու մարդկանց համբերության բաժակը մի օր կլցվի ու կդիմեն ամենակտրուկ միջոցների»: Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՐԱԵՐԹ

ՓԱԽՈՒՍՏԻ ՉԻ ԴԻՄԵԼ

Փետրվարի 12-ին վրաերթ է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 09:50-ի սահմաններում Արմավիրի մարզի բնակիչ 25-ամյա Ռուստամ Ս-ն իր վարած Opel մակնիշի ավտոմեքենայով Փարաքար գյուղի Այգեստան փողոցի թիվ 59 տան մոտ հետընթաց կատարելու ընթացքում վրաերթի է ենթարկել հետիոտն, նույն գյուղի բնակիչ 16-ամյա Պետրոս Տ.-ին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վարորդը փախուստի չի դիմել, ահազանգել է շտապօգնություն, սակայն մինչ շտապօգնության ժամանումը ՀՀ ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի ավագ պարեկ Տիգրան Մուրադյանը իր ծառայողական ավտոմեքենայով երեխային տեղափոխել է «Վաղարշապատ» բժշկական կենտրոն:

Մինչ այդ Տ. Մուրադյանը բուժօգնություն է ցուցաբերել երեխային՝ օգտագործելով ծառայողական ավտոմեքենայի մեջ պահվող դեղատուփից անհրաժեշտ պարագաներ:

Դեպքի վայր են ժամանել Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ղարիբ Գրիգորյանի, վաշտի հրամանատար Արսեն Բաղդասարյանի եւ դասակի հրամանատար Արա Պողոսյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են պարեկներ Տ. Մուրադյանն ու Ն. Բաբայանը:

Դեպքի վայր են ժամանել նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վաղարշապատի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Գեւորգ Միքայելյանի գլխավորությամբ:

Վթարի մասին ոստիկանության Վաղարշապատի բաժնից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է սթափ:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ վարորդը իր մորը հիվանդանոց տեղափոխելիս է եղել, եւ տեղի է ունեցել վրաերթը, եւ ի շնորհիվ պարեկի եւ Վաղարշապատի բժշկական կենտրոնի բուժանձնակազմի՝ երեխայի կյանքին վտանգ չի սպառնում:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 9-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 65 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Տավուշի մարզում բազմաթիվ են աղբավայրերը, սակայն դրանք չեն համապատասխանում օրենքով աղբավայրերին ներկայացվող պահանջների: Աղբավայրերի քանակի ու դրանց վիճակի վերաբերյալ լրագրողական մեր հարցումին ի պատասխան՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են. «Մարզի տարածքում գործում է 33 աղբավայր, ինչը տարածքային եւ շահագործման հնարավորությունների տեսանկյունից բավարարում են մարզի բնակչության եւ տնտեսավարող սուբյեկտների կողմից առաջացրած կոմունալ-կենցաղային թափոնների, աղբի տեղափոխման եւ աղբավայրում տեղադրման պահանջները: Աղբավայրերի տարածքները համայնքների խոշորացումից առաջ նախկին 32 համայնքների ավագանիների նիստերի որոշումներով հատկացված են որպես աղբավայր, բացառությամբ Իջեւան համայնքի վարչական տարածքում գտնվող Լուսաձոր-3 աղբավայրի, ինչի տարածքը մասնավոր սեփականություն է եւ վարձակալված է Իջեւանի համայնքապետարանի կողմից: Աղբավայրը սպասարկում է Իջեւան քաղաքի, Ենոքավան, Լուսաձոր եւ Ակնաղբյուր բնակավայրերի կոմունալ-կենցաղային կարիքները: Աղբավայրերը մասամբ են համապատասխանում ՀՀ օրենքներով եւ այլ իրավական ակտերով նախատեսված նորմատիվատեխնիկական պահանջներին: Այդ պահանջներին առավել համապատասխանում է վերջին ժամանակներս Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի հարակից տարածքում կառուցված աղբավայրը»: Մարզպետարանի պատասխանում հիշատակում չկա Դիլիջան համայնքի աղբավայրի մասին: Ավելի քան 32 հեկտար զբաղեցնող այդ աղբավայրը գտնվում է Հաղարծին գյուղի տարածքում. այնտեղ կուտակվում են Դիլիջան քաղաքի եւ համայնքի 6 գյուղերի՝ Հաղարծնի, Թեղուտի, Գոշի, Հովքի, Աղավնավանքի եւ Խաչարձանի կենցաղային թափոնները: Այդ աղբավայրը չունի ցանկապատ, պահակակետ, այնտեղ առկա են բազմաթիվ այրման օջախներ: Հաղարծնի աղբավայրում տարեկան կուտակվում է ավելի քան 17 հազար խորանարդ մետր կենցաղային աղբ: Դիլիջան համայնքում աղբահանությամբ զբաղվում է «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում եւ լուսավորություն» ՀՈԱԿ-ը: Անհրաժեշտ է Դիլիջան համայնքում ստեղծել նոր, օրենքի պահանջներին համապատասխան աղբավայր, ներկայումս գործող, Հաղարծին գյուղի տարածքում առկա աղբավայրը ռեկուլտիվացնել: ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի՝ նախատեսվում է Լոռու եւ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր, սակայն անցած 7 տարում ժամանակակից այդ աղբավայրը չի ստեղծվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՈՒՅՍՈՎ ՍՊԱՍԵԼՈՎ

ԴԺՈԽԱՅԻՆ ԹՎԱՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

Մարինե Բալայանի ընտանիքը, կրելով մի շարք զրկանքներ, շարունակում էր ապրել ու արարել հայրենի Արցախում՝ հույսով սպասելով, որ Արցախի համար մի օր արեւը նույնպես կծողար: 44-օրյա պատերազմի ժամանակ Մարինեն կորցրեց իր ամուսնուն, իսկ 2023թ. սեպտեմբերի 19-ի պատերազմն իր հետ տարավ քրոջ 19-ամյա որդուն: Սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտի «Հայկազով»-ի զորամասի պահեստի պայթյունից մինչ օրս էլ անհայտ կորած է համարվում քրոջ ամուսինը:

«Ստեփանակերտի պայթյունից հետո՝ երկու օր անց, ճանապարհվեցինք դեպի Հայաստան՝ անցնելով դժոխային թվացող ճանապարհ, որը տեւեց 38 ժամ: Մենք շտապում էինք, որովհետեւ պետք է հուղարկավորեինք քրոջս որդուն, ում մարմինն արդեն տեղափոխել էին Գորիսի դիահերձարան.... Ոչ մի կերպ չենք հարմարվում ո՛չ հայրենիքի կորստի, ո՛չ հարազատների կորստի հետ, ո՛չ էլ ամուսնուս գերեզմանն այնտեղ թողնելու փաստի հետ», - պատմում է Մարինեն: Մարինեի ամուսինը՝ Հայկը, արցախյան առաջին գոյապայքարի ժամանակ զոհված ազատամարտիկի որդի էր՝ դաստիարակված հայրենասիրությամբ ու նվիրվածությամբ: Հայկը ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո՝ 2007 թվականից, ծառայության է անցնում Արցախի պաշտպանության բանակում նախ՝ որպես ենթասպա, ապա բարեխիղճ ծառայության համար վերադասի կողմից նշանակվում է հակատանկային մարտկոցի հրամանատար: Ծառայությանը զուգահեռ ստանում է նաեւ բարձրագույն կրթություն՝ ավարտելով Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի իրավաբանության ֆակուլտետի պատմության բաժինը: Մասնակցել է քառօրյա եւ 44-օրյա պատերազմներին:

«44-օրյա պատերազմում հոկտեմբերի 22-ին Վարանդայի /Ֆիզուլի/ «Ելի» կոչվող տեղամասում թշնամու արձակած ԱԹՍ-ի հարվածից ծանր գլխուղեղային վիրավորում է ստանում Հայկը եւ անգիտակից վիճակում տեղափոխվում է Երեւանի «Աստղիկ» բժշկական կենտրոն: 11 ամիս շարունակ բժիշկները պայքարում էին նրա կյանքի համար, բայց ճակատագրի դեմ բոլորս անզոր էինք... 2021թ. սեպտեմբերի 18-ին, այդպես էլ գիտակցության չգալով, Հայկը եւս բռնում է հավերժի ճանապարհը....»,- խորը ցավով վերհիշում է կինը՝ Մարինեն:

Արցախից Հայաստան տեղափոխելու ողջ ճանապարհին մեքենան վարել է Մարինեի 15-ամյա որդին: Հիմա Մարինեն իր երեք երեխաների, ծնողների եւ քրոջ ընտանիքի հետ ապրում է Հրազդան քաղաքում: Ասում է՝ աշխատանք են փնտրում օրվա հոգսը թեթեւացնելու համար: Մինչեւ 44-օրյա պատերազմը Հայկի ընտանիքն ապրում էր Մարտունու շրջանի Ներքին Ճարտար քաղաքում, սակայն քաղաքը 2020 թվականին անցավ թշնամու վերահսկողության տակ, եւ Մարինեն իր երեք երեխաների հետ ստիպված եղավ տեղափոխվել Ստեփանակերտ: Հայկի աճյունը եւս ամփոփվել է Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում:

«Առանց չափազանցնելու կասեմ, որ Հայկն օժտված էր մարդկային բոլոր դրական հատկանիշներով՝ բարի էր, հոգատար, անկեղծ ու նվիրված եւ չափից շատ հայրենասեր: Սիրված եւ հարգված էր եւ՛ ընկերների, եւ՛ հարազատների կողմից: Զինակից ընկերների մեջ մեծ հարգանք էր վայելում, միշտ պատվով ու խիզախությամբ է կատարել իր առջեւ դրված ցանկացած խնդիր»,- պատմում է Մարինեն:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԽՈՒՃԱՊ

ՎԱՐԴԵՆԻ՞ՍՆ Է ԴԱՏԱՐԿՈՒՄ

Ամբողջ հասարակության մեջ մեծ խուճապ կա, որ Վարդենիսը ուզում են դատարկեն. այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Վարդենիսում բողոքի ակցիա իրականացնող բնակիչներից մեկը:

«Եթե այդպիսի բան չկա, թող հանրային կերպով հանդես գան, ժողովրդին հանգստացնեն: Ինչ տարել են Վարդենիսից՝ մորգը, սանեպիտկայանը, թող հետ բերեն, հիմա էլ պասպորտսեղանն են ուզում տանեն:

Ինչ կա, թող թողնեն տեղում, իսկ տարածը վերադարձնեն. եթե չէ, ուրեմն հաստատ ուզում են իրականացնեն այդ ծրագիրը: Ժողովրդի մեջ խուճապ կա, իսկ իրենք այնտեղ հանգիստ նստած են: Կա՛մ իրենց անվտանգությունը լավ չի աշխատում, կա՛մ էլ, հակառակը, լավ աշխատում է, բայց իրենց մեկ է:

Մենք չենք ուզում քաղաքականացնել այս հարցը, եկել ենք մեր պահանջը ներկայացնենք: Նիկոլը ի՞նչ է անում, նրացից ազատվելու համար ընտրեցինք Նիկոլին, հիմա ի՞նչ է անում, Վարդենի՞սն է դատարկում: Գյուղերը արդեն դատարկում են, ամեն գյուղում 50 փակ դուռ ցույց կտամ»,- ասաց Վարդենիսի բնակիչներից մեկը: Հիշեցնենք, որ առավոտից Վարդենիսի եւ հարակից գյուղերի բնակիչները փակել են դեպի քաղաք տանող գլխավոր ճանապարհը: Նրանք դժգոհում են Վարդենիսի անձնագրային եւ վիզաների բաժնի գրասենյակը փակելու որոշման դեմ: Նշենք, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիս եւ Ճամբարակ համայնքների անձնագրային ծառայությունները փակվելու են: Նախատեսվում է Գեղարքունիքի մարզի բոլոր անձնագրային ծառայությունները միացնել Մարտունի համայնքի անձնագրային ծառայությանը: Փոփոխությունների արդյունքում ծառայության անվանումը կլինի Միգրացիայի եւ քաղաքացիական ծառայության Մարտունու բաժին:

Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից պարզաբանել էին, որ միգրացիայի ոլորտում նախաձեռնվել են խորքային բարեփոխումներ:

Այս առնչությամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Երբ Մեղրիի դատարանն էր օպտիմալացվում, քաղաքական շահարկումների տեղիք էր տալիս, հիմա էլ մեր որոշ գործընկերներ նույնն անում են Վարդենիսի հետ կապված: Հիմա ես ուզում եմ այս քարտեզը բոլորը տեսնեն: Վայք, Արարատ, Նոր Հաճըն, այսինքն՝ մենք ունենք Սյունիքի մարզում, Վայոց ձորի մարզում, Գեղարքունիքի մարզում, գործնականում բոլոր տեղերում ունենք օպտիմալացում, Երեւան քաղաքում էլ, եւ ես ինչպես Արդարադատության նախարարությունում դատարանի դեպքում ասացի, չի կարելի այդ շահարկումների հետեւանքով մեր բարեփոխումների գործընթացները կանգնեցնել»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 28 պատահար. 3 մարդ զոհվել է, 38-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ՎՏԲ–ՀԱՅԱՍՏԱՆ»

«ՎՏԲ-Հայաստան» բանկն աջակցել է առաջնորդության մասին բիզնես-գրքի հրատարակմանը:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը հանդես եկավ որպես Newmag հրատարակչության գործընկեր, որը հրատարակել է Գոռ Կարապետյանի «Պրոակտիվ առաջնորդ» գիրքը: Հեղինակը գրքում նկարագրում է իր անձնական փորձը եւ հաջողված բիզնես նախագծերի համաշխարհային օրինակներ: Հրատարակության շնորհանդեսը տեղի ունեցավ փետրվարի 10-ին՝ Newmag Winter Fest 2024 փառատոնի շրջանակներում:

«Բիզնես գրականությունը գիտելիքի լավ աղբյուր է ինչպես սկսնակ ձեռնարկատերերի, այնպես էլ փորձառու ղեկավարների համար: Այն հնարավորություն է ընձեռում զարգանալու, նոր լուծումներ փնտրելու եւ իրենց մասնագիտական ոլորտում իրավասությունների մակարդակը բարձրացնելու: Գոռ Կարապետյանի գիրքը հետաքրքիր եւ օգտակար կլինի երիտասարդ սերնդի ընթերցողների համար սեփական բիզնես մոդելի կառուցման գործընթացում»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն - տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«Երկար տարիներ մենք աշխատում ենք ներկայացնել այնպիսի գրքեր, որոնք արդիական կլինեն ընթերցողների, այդ թվում՝ ձեռներեցների շրջանում: «ՎՏԲ-Հայաստան» բանկի հետ համագործակցության շրջանակում մենք հրատարակել ենք բիզնես-գիրք, որտեղ հեղինակը համատեղում է ակտիվ առաջնորդության ունիվերսալ ալգորիթմը արդյունավետ մեթոդների եւ համաշխարհային բիզնեսի գործնական օրինակների հետ»,- նշել է Newmag հրատարակչության տնօրեն Արտակ Ալեքսանյանը: Գիրքը շուտով հասանելի կլինի երկրի բոլոր գրախանութներում:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԿՄԱՄՆԱԿՑԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի):

Ժաննա Անդրեասյանը Աբու-Դաբիում փետրվարի 12-14-ը կմասնակցի ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի եւ արվեստի կրթության վերաբերյալ համաշխարհային համաժողովին:

Համաժողովին մասնակցությունը հնարավորություն կընձեռի տարածելու եւ հանրահռչակելու մշակութային կրթության ոլորտում Հայաստանի փորձն արտերկրում, խթանելու օտարերկրյա պետությունների հետ համագործակցությունը եւ կրթամշակութային կապերը, ինչպես նաեւ սերտացնելու համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ օտարերկրյա պետությունների գործընկեր կազմակերպությունների հետ, ձեռք բերելու նոր կապեր եւ պայմանավորվածություններ, մշակելու նոր համատեղ ծրագրեր:

Համաժողովի ընթացքում ԿԳՄՍ նախարարը թեմատիկ պանելային քննարկումների ընթացքում հանդես կգա զեկույցներով:

«ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ»

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հանրապետության դպրոցներում 5-րդ եւ 7-րդ դասարանների աշակերտները, «Առողջ ապրելակերպ» խմբակի նոր չափորոշիչներով դասընթացներին մասնակցելով, հնարավորություն ունեն ծանոթանալու կարեւոր հարցերի մի շարք ուղղություններով՝ սնուցում եւ ֆիզիկական ակտիվություն, աճ, զարգացում, հիգիենա, անվտանգություն եւ այլն: Խմբակը նշված դասարանների համար դարձել է պարտադիր: Աշակերտները հիմնական դասացուցակով նախատեսված ժամերից հետո մասնակցում են խմբակի դասերին: Խմբակի դասընթացները տնային աշխատանքներ չեն նախատեսում, երեխաները դասընթացի բովանդակությանը ծանոթանում են բացառապես դասարանում: Չկա առարկայի դասագիրք, կա միայն ուսուցչի ձեռնարկ:



Օրերս համացանցում ակտիվ քննարկման առարկա դարձավ «Առողջ ապրելակերպ» դասընթացի բովանդակությունը: Նշվում էր, որ 5-րդ դասարանում անդրադարձ կա սեռական դաստիարակությանը, պահպանակների օգտագործմանը: Կարծիքներ էին հնչում այն մասին, որ 5-րդ դասարանում նման թեմաներով դասընթացները ճիշտ չեն: Անդրադառնալով նշված դիտարկումներին ու մտահոգություններին՝ «Առողջ ապրելակերպ» աշխատանքային խմբի անդամները նշեցին, որ սխալ տեղեկատվություն է տարածվում. կա թյուրըմբռնում: Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) գնահատման, մշակման եւ զարգացման բաժնի պետ, «Առողջ ապրելակերպ» աշխատանքային խմբի ղեկավար Լուսինե Ալեքսանյանը նշեց, որ նախ առողջ ապրելակերպի դասընթացները նորություն չեն, դրանք կան 2007 թվականից, պարզապես ներառված էին «Ֆիզկուլտուրա» առարկայի շրջանակում՝ բարձր դասարանների համար:

«Հիմա նպատակ է դրվել առանձին խմբակի ձեւաչափով դասընթացը կազմակերպել, որպեսզի այն լինի առավել արդյունավետ, քանի որ մշտադիտարկումը ցույց է տվել որոշակի բացեր: Ոչ միշտ էր, որ «Ֆիզկուլտուրա» առարկայի շրջանակում ուսուցիչները պատշաճ անդրադառնում էին թեմաներին: Առանձին խմբակի ձեւաչափով դասընթացը կազմակերպելուց զատ, նոր չափորոշիչներով դասավանդում նախատեսվել է նաեւ 5-ից 7-րդ դասարանների աշակերտների համար: Տարրական դասարանում առողջ ապրելակերպի թեմային անդրադարձ կատարվում է «Ես ու շրջակա աշխարհը» առարկայի շրջանակում, 8-ից բարձր դասարանի աշակերտները թեմային ծանոթանում են «Ֆիզկուլտուրա» առարկայի շրջանակում: Ստացվում էր՝ միջին դասարանների համար թեման բաց էր մնում: Այնինչ, դեռահասության շրջանում առողջ ապրելակերպին միտված դասընթացները շատ կարեւոր են, քանի որ տարիքը ռիսկային է»,- ասաց Լուսինե Ալեքսանյանը: Ինչ վերաբերում է վերարտադրողական առողջությանը, պահպանակների օգտագործմանը, ապա Լուսինե Ալեքսանյանը նշեց, որ 5-րդ դասարանցիների համար նախատեսված թեմաների շրջանակում նման բան չկա:

Արաբկիր բժշկական համալիրի երեխաների եւ դեռահասների առողջության ինստիտուտի մանկաբույժ, դեռահասների առողջության ծրագրերի համակարգող Մարինա Մելքումովայի խոսքով՝ «Առողջ ապրելակերպ»-ի թեմաներն ուղղված են անձի զարգացմանը, առաջին բուժօգնության, ինչպես նաեւ ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութի վնասակար ազդեցությանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ 4

«ԲԻԷԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան, Սեւան ք., Նաիրյան փողոց, 176 շենք, 3 հասցեում գտնվող 65,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15700000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 29.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.03.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէԹի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԽՈՒՐ, ԲԱՅՑ ՈՉ ՀՈՒՍԱՀԱՏ

ՊՈԵԶԻԱ՝ ՄԵՐՕՐՅԱ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Ընթերցողներին ներկայացվեց Համլետ Առաքելյանի «Ինչ տխուր է սակայն» բանաստեղծությունների ժողովածուն:



Համլետ Առաքելյանը պատմեց, որ ընթերցողը գրքում կգտնի խոստովանություն ոչ միայն սիրո, այլեւ կյանքի մասին:

«Սա իմ երրորդ գիրքն է, առաջինն անգլերեն բանաստեղծություններ էր, երկրորդը «Անմահների ակադեմիան» էր, որը ֆենտզի ժանրի վեպ էր. այն նախորդ տարի դարձավ բեսթսելեր, իսկ այսօրվա գիրքն իմ արդեն երրորդ գիրքն է եւ առաջին հայերեն բանաստեղծությունների ժողովածուն: Ես ինձ առաջնային պոետ եմ համարում, քանի որ իմ ուղին սկսել եմ որպես պոետ: «Ինչ տխուր է սակայն» ժողովածուում տեղ գտած բանաստեղծությունները չեն գրվել վերջին տարիներին, սրանք իմ տարբեր տարիներին գրված հայերեն բանաստեղծություններն են՝ հավաքված մեկ ժողովածուում»,-ասաց հեղինակը:

Գրքի խմբագիր Արմեն Սարգսյանն ընդգծեց, որ Համլետի հետ ընկերներ են շատ վաղուց, եւ չէր մտածում, որ մի օր կդառնա նրա պոեզիայի գրքի խմբագիրը:

«Բայց ինչպես ասում են, պոետին պոետն է խմբագրում: Հրաշալի գիրք է ստացվել, որը տարբեր բաժիններից է կազմված, որոնք ոչ թե առանձնացված են ըստ թեմաների, այլ ըստ զգացողությունների: Համլետի պոեզիայում մի քանի կարեւոր բաղադրիչներ կան. նրա բանաստեղծությունները եւ՛ կոնցեպտուալ են, եւ՛ վիզուալ են, եւ՛ խոստովանական տեքստեր են: Խոստովանական է, քանի որ նա իր բանաստեղծություններում շատ անձնական թեմաներից է խոսում, ինքնակենսագրական որոշ դրվագներ է քննում, կոնցեպտուալ են, որովհետեւ դրանք շատ ինտելեկտուալ են, որոնք Համլետի պոեզիան հասցնում են վիզուալ իրականություն»,-նշեց խմբագիրը:

Անդրադառնալով գրքում օգտագործված ջնջելու տեխնիկային՝ խմբագիրը նշեց, որ այստեղ ջնջված են բառեր, կապակցություններ, նախադասություններ, նաեւ ամբողջական բանաստեղծություններ, այսինքն՝ կան բաց թողնված էջեր, որոնցով բանաստեղծն ուզում է ընդգծել, որ այն, ինչ չի ասվել, ավելի կարեւոր է ասվածից:

«Եթե տեսնեք, գրքում բազմաթիվ բազմակետեր կան, անգամ կետադրություն չկա, այսինքն՝ ամեն ինչը ջնջված է գրքում, եւ սրանով Համլետը քննում է ներկայության եւ բացակայության սիմվոլները՝ անդրադառնալով այն մարդկանց, որոնք մեզ հետ են, եւ այն մարդկանց, որոնք մեզնից գնում են»,-ասաց գրքի խմբագիրը:

Շնորհանդեսին հեղինակը եւ ընկերները՝ Անի Խաչիկյանը, Մանե Մխոյանը, Հրաչուհի Ութմազյանը եւ Տաթեւ Հովակիմյանը, ընթերցեցին գրքից հատվածներ:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի անդամները մեկնարկեցին Եվրոպայի առաջնությունում: Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում ընթացող Եվրոպայի առաջնության 55 կգ քաշայինների պայքարում Մանվել Խաչատրյանը դուրս է եկել կիսաեզրափակիչ, որտեղ կմրցի Մոլդովան ներկայացնող Արտյոմ Դելինուի հետ: Խաչատրյանը քառորդ եզրափակիչում գերազանցել էր թուրք Ադեմ Ուզունին:

63 կգ քաշային Հրաչյա Պողոսյանը մեկնարկային գոտեմարտում զիջեց Շվեդ Վիրջիլ Բիկային:

77 կգ քաշում Եվրոպայի գործող չեմպիոն Մալխաս Ամոյանը դուրս է եկել կիսաեզրափակիչ: Հայաստանը ներկայացնող մարզիկը 1/8 եզրափակիչում հաղթել էր Իտալիայից Վիտո Աբբրեսցիային եւ քառորդ եզրափակիչում՝ չեզոք դրոշի ներքո հանդես եկող Ադլետ Տիուլիուբաեւին: Կիսաեզրափակիչում Ամոյանի մրցակիցը Մոլդովայից Ալեքսանդրին Գուտուն է:

87 կգ քաշում Գեւորգ Թադեւոսյանը հաղթեց մեկնարկում, սակայն պարտվեց 1/8 եզրափակիչում: Եվ գերծանր քաշային Դավիթ Օվասափյանը որակավորման փուլում հաղթեց Շվեյցարիան, 1/8 եզրափակիչում՝ Սերբիան ներկայացնող մարզիկներին: Նա քառորդ եզրափակչում է:

ՀԱՂԹԵՑ 6:0 ՀԱՇՎՈՎ

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնության 24-րդ տուրում փոխչեմպիոն «Արսենալը» հյուրընկալվեց «Վեստ Հեմին»: Իսպանացի Միկել Արտետայի գլխավորած թիմը հաղթեց 6:0 հաշվով: Դուբլի հեղինակ դարձավ անգլիացի հարձակվող Բուկայո Սական: Աչքի ընկան նաեւ ֆրանսիացի պաշտպան Ուիլյամ Սալիբան, բրազիլացի պաշտպան Գաբրիել Մագալյանը, բելգիացի հարձակվող Լեանդրո Տրոսարդը եւ անգլիացի կիսապաշտպան Դեքլան Ռայսը: Երրորդ տեղում գտնվող «Արսենալը» 52 միավորով հավասարվեց երկրորդ տեղում գտնվող չեմպիոն «Մանչեսթեր Սիթիին», որը մեկ հանդիպում քիչ է անցկացրել: «Վեստ Հեմը» 8-րդն է՝ 36 միավոր: «Արսենալը» Պրեմիեր լիգայում անցկացրած արտագնա հանդիպումներում տարավ ամենախոշոր հաղթանակն իր պատմության մեջ:

ԱՆՋԻՋՈՒՄ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի օլիմպիական հավաքականը Փարիզ-2024-ին կմասնակցի ոչ փոքր կազմով, մեդալների համար պայքարն անզիջում կլինի: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը խոսեց Օլիմպիական խաղերում Հայաստանի հավաքականի կազմի եւ մարզիկների հնարավորությունների, «Տարվա 10 լավագույն մարզիկների» ընտրության կարգի փոփոխության, Բաքվում կայացած աշխարհի առաջնությանը Հայաստանի հրաձիգների չմասնակցելու պատճառների, Հայաստանում առաջիկայում կայանալիք խոշոր միջազգային մրցաշարերի մասին: «Հայաստանն այսօր դարձել է սպորտային խոշոր իրադարձություններ կազմակերպող երկիր: Ընդամենը երկու տարում այնքան մրցում ենք արել, որ խորհրդային տարիներից մինչեւ 2021 թվականն այդքան մրցում չէր արվել»,-ասաց Գիլոյանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ -ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

Լոտ 1. ք. Գյումրի, Պ. Սեւակի փող., 13 շենք, թիվ 4 հասցեում գտնվող 164,47 քմ տարածք, 90 քմ նկուղ եւ 30,07 քմ ինքնակամ աստիճաններ: Լոտի մեկնարկային գինը՝ 81400000 ՀՀ դրամ:

Լոտ 2. Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Մյասնիկյան փողոց, 5/1 հասցեում գտնվող 107,73 քմ բնակելի տուն, 22,3 քմ օժանդակ շինություն, 30,54 քմ օժանդակ շինություն, 9,51 քմ /19,02 խմ/ պարիսպ եւ 0,062482 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16900000 ՀՀ դրամ:

Լոտ 1-ի աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 29.02.2024թ.-ին եւ հաջորդող ինը աշխատանքային օրը, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով:

Լոտ 2-ի աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 29.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին:

Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 247010337415000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● Մարտի 24-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Սամվել Երվինյան. 50 տարի ջութակի հետ» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-20000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

ՀԱՐՑ. Կինս մահացել է: Իր կենսաթոշակի չափն ավելի բարձր էր, քան իմ կենսաթոշակի գումարի չափը: Տեղյակ եմ, որ կա նման օրենք, երբ ամուսիններից մեկի կեսաթոշակի տոկոսները փոխանցվում են մյուսին: Խնդրում եմ ասել՝ հնարավոր է վերահաշվարկ կատարվի, եւ կնոջս կենսաթոշակի գումարի չափից որոշ գումար փոխանցվի իմ գումարին:

Սամվել Քառյան (67 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի մահվան օրվա դրությամբ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ամուսնուն, եթե չի աշխատում: Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետեւյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի դիմելու դեպքում դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի տեսակը փոխվում է, եթե կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի այն տեսակի իրավունքը, որի համար դիմել է:

Քանի որ Սամվել Քառյանը չի նշել իր եւ իր կնոջ աշխատանքային ստաժերի չափերը, ապա հարցին հստակ պատասխանել հնարավոր չէ: Հետեւաբար կենսաթոշակի տեսակը փոխելու եւ իրեն նշանակված կենսաթոշակի փոխարեն կերակրողին կորցնելու դեպքում (կնոջ գծով) կենսաթոշակ նշանակելու հարցը պարզաբանելու համար նա կարող է դիմել սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք իր ընտրությամբ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե անձը աղաստան ստանալու համար դիմում է ներկայացրել եւ մերժում է ստացել, ապա ինչպե՞ս կարող է աղաստանի տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկել:

Միլենա Խաչատրյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ. Խաչատրյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ դիմողն իրավունք ունի իր ապաստանի դիմումի վերաբերյալ Միգրացիոն պետական ծառայության կողմից ընդունված բացասական որոշումը բողոքարկել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, այնուհետեւ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, այնուհետեւ ՀՀ վճռաբեկ դատարան: Եթե դիմողը բողոքարկել է ՄՊԾ-ի որոշումը, ապա մինչեւ դատական ատյանների կողմից վերջնական որոշում ընդունելը նա համարվում է ապաստան հայցող եւ իրավունք ունի օրինական գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ միգրացիոն պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ դիմողը չի արտաքսվի կամ որեւէ կերպ չի վերադարձվի իր քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր, քանի դեռ վերջինիս ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում չի ընդունվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Բյուրականի աստղադիտարանի «Բարձր էներգիաների աստղաֆիզիկա» գիտահետազոտական բաժնի վարիչ Գագիկ Տեր-Ղազարյանի «Գերբարձր էներգիաների աստղաֆիզիկայում ձեւավորված լորենցյան համաչափությունը եւ համապատասխան երկրաչափությունը» աշխատությունը լույս կտեսնի Gravitation and Cosmology ամսագրում, որը ոլորտի կարեւորագույն միջազգային ամսագրերից մեկն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-1 -5 +5 +10
Կոտայքի լեռներ	-1 -4 +5 +9
Կոտայքի նախալեռներ	0 +2 +10 +12
Գեղարքունիք	-4 +1 +5 +10
Լոռի	+2 +6 +13 +18
Տավուշ	+4 +8 +19 +22
Արագածոտնի լեռներ	-2 -5 +5 +9
Արագածոտնի նախալեռներ	0 +2 +10 +15

Արարատ	-1 +4 +14 +17
Արմավիր	-2 +1 +14 +16
Վայոց ձորի լեռներ	-2 -5 +5 +8
Վայոց ձորի նախալեռներ	0 +3 +14 +17
Սյունիքի հովիտներ	+7 +10 +21 +23
Սյունիքի նախալեռներ	+1 +4 +14 +18
ԼՂՀ	+2 +4 +13 +17
Երեւան	+8 +10 +13 +15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.2.2024**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*